ԿԱՐԾԻՔ

ՌՈՒԲԵՆ ԳԱԳԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ

«Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի կազմակերպման դիզայներական խնդիրները»

թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ,

ներկայացված ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ռուբեն Ոսկանյանի «Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի կազմակերպման դիզայներական խնդիրները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը առաջին գիտական հետազոտությունն է, որտեղ մանրամասն պարզաբանվել և ներկայացվել է Աշտարակ քաղաքի պատմամշակութային ժառանգության պահպանության ճարտարապետական և զբոսաշրջության ծրագրերը, ներառելով պատմաճարտարապետական հուշարձանները, տվյալ տարածքում գտնվող հուշարձանների միջավայրային հայեցակարգը և դրանց ճարտարապետադիզայներական ուսումնասիրությունները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ունեն ենթաբաժիններ: Աշխատանքում ներառված են նաև եզրակացություններ, ինչպես նաև հղումներ՝ բազմաթիվ մասնագիտական գրականության նմուշներից: Ատենախոսության մաս են կազմում նաև հավելվածները՝ նախագծեր, գծագրեր և ֆոտոնկարներ:

Առաջին և երկրորդ գլուխներում հիմնականում ներկայացված են պատմական զուգահեռներ, ընդհանուր տեղեկություններ, պատմական փաստեր, Աշտարակ քաղաքի շրջակա պատմամշակութային հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը, մի շարք բնակավայրերի, հուշակոթողների, ջրանցքի, դամբարանադաշտի ուսումնասիրություն, վերլուծություն, պարզաբանում:

Երրորդ գլխում ներկայացված է Աշտարակ քաղաքի կենտրոնական հատվածի դիզայներական կազմակերպումը, գլխավոր շենք-շինությունները, եկեղեցիները, տները, դրանց ցուցակագրումը, ներկա վիճակն ու փաստագրական այլ տվյալներ:

Ատենախոսը կատարած աշխատանքի եզրակացություններում հանգում է նրան, որ Աշտարակ քաղաքը, լինելով Հայաստանի պատմական քաղաքներից մեկը, որտեղ կան տարբեր ժամանակաշրջաններին պատկանող ուշագրավ պատմամշակութային հուշարձաններ, որոնք ունեն պահպանման և նորովի ներկայանալու հեռանկարներ: Անհրաժեշտ է հուշարձանների տարածքների դիզայներական կարգավորումներ և դրանց ներդաշնակեցնող գեղագիտական և ֆունկցիոնալ միջոցառումներ: Եզրակացություններում հանդիպող մի շարք պնդումների կողքին հենց սա է, ըստ իս, ամենակարևորը: Թեպետ դրանց փուլային կամ աշխատանքային կամ այլ առաջարկվող տարբերակների վերաբերյալ կա թերի ինֆորմացիա:

Ատենախոսի աշխատությունը ոչ շատ ծավալուն, սակայն մշակված գիտական աշխատություն է, որտեղ հիմնովին ներկայացված և պարզաբանված է աշխատության գիտական նորույթը:

Աշխատությունը ընթերցվում է ամենայն հետաքրքրությամբ, գրված է սահուն ու ճշգրիտ:

Ատենախոսական աշխատության մեջ օգտագործվել ու ուսումնասիրվել են մի քանի տասնյակ գրքեր, կայքեր, հոդվածներ (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

Լիարժեք ուսումնասիրելով ատենախոսական այս աշխատությունը և կարծիք կազմելով՝ անհրաժեշտ եմ համարում ներկայացնել մի քանի դիտողություն-առաջարկ:

Ատենախոսության մաս կազմող հավելվածները պարունակում են քիչ քանակի նյութեր/պատկերներ: Ցանկալի կլիներ դրանք ավելացնել, կատարել նաև պատկերների վերլուծություն: Աշխատությունն է՛լ ավելի արժեքավոր կլիներ, եթե քննարկման նյութ դառնային նաև միջազգային այլ նմանատիպ աշխատանքների /պատմական քաղաքների օրինակով/ համեմատություններ՝ փաստերի և պատկերների զուգահեռ հետազոտությամբ: Ատենախոսությունում պետք չէր տեղադրել մի շարք կոնվենցիաներ, կանոնադրություններ և նմանատիպ այլ փաստեր. դրանք ավելի շատ թողնում են ատենախոսությունը զուտ ծավալային առումով լրացնելու տպավորություն: Ցանկալի կլինի հետագայում խմբագրել և տեքստերից հանել ոչ կարևոր պատմական ինֆորմացիաները:

Ցանկանում եմ ավելացնել նաև, որ նշված դիտողություններն ու առաջարկները չեն խանգարում հավաստել, որ «Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի կազմակերպման դիզայներական խնդիրները» ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսության հեղինակ Ռուբեն Ոսկանյանն արժանի է ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի
ավագ գիտաշխատող,
արվեստագիտության թեկնածու, դոցենտ՝

Մարտին ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մարտին Հարությունյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

17 սեպտեմբերի 2020թ.